ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Գ. Միրիջանյանի մոտ 2018 թվականի հուլիսի 3-ին կայացած խորհրդակցության

Մասնակցությամբ՝

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալներ ***Գ. Գաբրիելյանի***
Կ.Գրիգորյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար ***Ա.Հովհաննիսյանի***

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի
կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների
ղեկավարների

ՀՀ Արմավիրի մարզպետի օգնականների

Օրակարգում

1. ***ՀՀ Արմավիրի մարզում առկա հրատապ խնդիրների քննարկում:***

/ՀՀ Արմավիրի մարզպետ – Գ.Միրիջանյան/

ՀՀ Արմավիրի մարզպետ Գ.Միրիջանյանը մինչև օրակարգային հարցերի քննարկումը խորհրդակցության մասնակիցներին իրազեկեց, որ ՀՀ Արմավիրի մարզպետարանում իրականացվել են կադրային փոփոխություններ, որի արդյունքում ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալներ են նշանակվել Ալեքսանդր Ղուկասյանը, Կարեն Գրիգորյանը, ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի Կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար է նշանակվել Ս.Բուդաղյանը, ՀՀ Արմավիրի մարզպետի օգնական՝ Վահե Վանցյանը: ՀՀ Արմավիրի մարզպետը միաժամանակ կատարած աշխատանքների համար շնորհակալություն հայտնեց ՀՀ Արմավիրի մարզպետի նախկին տեղակալներ Լ.Մուրադյանին, Մ.Քարտաշյանին և ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Փ.Կարապետյանին:

Այնուհետև մարզպետն անդրադարձավ ՀՀ Արմավիրի մարզում առկա հրատապ խնդիրների քննարկմանը:

Քննարկվեցին՝

Հարց 1. ՀՀ Արմավիրի մարզի դպրոցներում առկա խնդիրների և իրականացվելիք միջոցառումների վերաբերյալ .

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Ս.Բուդաղյանին՝

ա/ուսումնասիրել և ներկայացնել տեղեկատվություն ՀՀ Արմավիրի մարզի դպրոցների լիցեզիաների առկայության վերաբերյալ.

բ/ներկայացնել տեղեկատվություն ՀՀ Արմավիրի մարզի ՊՈԱԿ-ների շենք-շինությունների սեփականության իրավունքների գրանցման և վկայականների ձեռքբերման գործընթացի վերաբերյալ.

գ/ներկայացնել տեղեկատվություն ՀՀ Արմավիրի մարզի դպրոցների կանոնադրությունների առկայության վերաբերյալ.

դ/վերանայել դպրոցների կառավարման խորհուրդների կազմերը.

ե/ ՀՀ Արմավիրի մարզի դպրոցների տնօրենների թափուր պաշտոնների համար անցկացվող մրցույթների ժամանակավոր դադարեցման մասին:

զ/ՀՀ Արմավիրի մարզի դպրոցներում լայնածավալ մոնիտորինգ անցկացնելու մասին.

է/ՊՈԱԿ-ների ապաքաղաքական գործունեության ապահովման մասին.

ը/կենսաթոշակային տարիքի մանկավարժների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման մասին:

/Ժամկետ 09.07.2018թ/

Հարց 2.ՀՀ Արմավիրի մարզի էջմիածին քաղաքում Զվարթնոց տաճարի դիմաց տեղադրված տաղավարի շինարարության օրինականության վերաբերյալ:

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության պետի ժամանակավոր պաշտոնակատար Հ.Կուրղինյանին՝

ուսումնասիրել տաղավարի շինարարության կատարման օրինականությունը և զեկուցել ՀՀ Արմավիրի մարզպետին.

բ/ուսումնասիրել ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքում խմելաջրի ջրագծերի անցկացման հետ կապված խնդիրը և զեկուցել ՀՀ Արմավիրի մարզպետին:

/**Ժամկետ 09.07.2018թ**/

Հարց 3.ՀՀ Արմավիրի մարզի << Արմավիրի ԲԿ>>-ում գործող դիալեզի սարքի վերանորոգման և << Արմավիրի ԲԿ>>-ի հաշվեկշռում գտնվող չշահագործվող մեքենայի վերաբերյալ:

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Հ.Հարությունյանին՝

ա/ներկայացնել տեղեկատվություն <<Արմավիրի ԲԿ>> -ում գործող դիալեզի սարքի վերանորոգման և << Արմավիր ԲԿ>>-ի հաշվեկշռում գտնվող չշահագործվող մեքենայի վերաբերյալ.

բ/ներկայացնել տեղեկեկատվություն ՀՀ Արմավիրի մարզպետարանի ենթակայության բուժհամակարգի կենսաթոշակային տարիքի աշխատակիցների վերաբերյալ:

/Ժամկետ 09.07.2018թ/

Հարց 4

ՀՀ Արմավիրի մարզի համայնքներում համայնքային թափուր հաստիքների մրցույթների վերաբերյալ

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Ա.Ղուկասյանին՝

պարբերաբար ներկայացնել տեղեկատվություն ՀՀ Արմավիրի մարզի համայնքների աշխատակազմերում թափուր հաստիքների մրցութների վերաբերյալ:

(Ժամկետ 09.07.2018թ)

Հարց 5 ՀՀ Արմավիրի մարզում գյուղատնտեսական մթերքների ծավալների վերաբերյալ

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետի օգնական Վ. Վանցյանին՝

Ուսումնասիրել համայնքներում սոխի, կարտոֆիլի և գազարի բերքահավաքի ժամկետները և զեկուցել ՀՀ Արմավիր մարզպետին:

(Ժամկետ 09.07.2018թ):

Հարց 7 Արմավիր քաղաքի N 108 թաղամասի գազաֆիկացման վերաբերյալ

Հանձնարարական

ՀՀ Արմավիրի մարզպետի օգնական Ն.Պետրոսյանին՝

ուսումնասիրել և ներկայացնել առաջարկություն Արմավիրի քաղաքի N 108 թաղամասի գազաֆիկացման խնդրի լուծման առնչությամբ:

/**Ժամկետ 09.07.2018թ**/

Օրակարգում ընդգրկված հարցերի քննարկման ավարտմամբ ՀՀ Արմավիրի մարզպետ Գ.Միրիջանյանը խորհրդակցությունը հայտարարեց ավարտված:

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝

Недействительная подпись

X _____

Գ. ՄԻՐԻՋԱՆՅԱՆ

Արձ.՝ ՀՀ Արմավիրի մարզպետարանի
աշխատակազմի քարտուղարության
ընդհանուր բաժնի պետ Մ.Առուշանյան